# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N3252 - Ա** **23 ապրիլի 2009թ.**

ՇԱՀՈՒՄՅԱՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 58/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐՋԱՆՈՒՇ ՇՄԱՎՈՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ՎԱՐՈՒԺԱՆ ՌԱՖԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ՌԱՖԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ՍՎԵՏԼԱՆԱ ՌԱՖԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վերջանուշ Շմավոնի Գասպարյանի (ծնված 03.10.1936թ.), Վարուժան Ռաֆիկի Ղազարյանի (ծնված 04.12.1967թ.), Սամվել Ռաֆիկի Ղազարյանի (ծնված 11.06.1962թ.), Սվետլանա Ռաֆիկի Ղազարյանի (ծնված 12.04.1961թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Շահումյան 6-րդ փողոցի հ.58/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 465.48քմ, որից 201.5քմ մակերեսով հողամասը Վերջանուշ Շմավոնի Գասպարյանին, Վարուժան Ռաֆիկի Ղազարյանին, Սամվել Ռաֆիկի Ղազարյանին, Սվետլանա Ռաֆիկի Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 263.98քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 21.01.2005թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, 14.03.2009թ. անշարժ գույքի բաժանման պայմանագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 24.03.2009թ. հ.1348, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 17.04.2009թ. հ.20/2-Ե/255 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 15.04.2009թ. հ.20ել-3373 եզրակացությունը, համաձայն որի Շահումյան 6-րդ փողոցի հ.58/1 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Շահումյան 6-րդ փողոցի հ.58/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վերջանուշ Շմավոնի Գասպարյանի, Վարուժան Ռաֆիկի

Ղազարյանի, Սամվել Ռաֆիկի Ղազարյանի, Սվետլանա Ռաֆիկի Ղազարյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 201.5քմ մակերեսով հողամասին կից 263.98քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 263.98քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Շահումյան 6-րդ փողոցի հ.58 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Շահումյան 6-րդ փողոցի հ.58/1 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վերջանուշ Շմավոնի Գասպարյանի, Վարուժան Ռաֆիկի Ղազարյանի, Սամվել Ռաֆիկի Ղազարյանի, Սվետլանա Ռաֆիկի Ղազարյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ